

ԶԳԱՅԱԽԱԲՈՒԹԻՒՆՆԵՐՆ

ԵՒ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ



Մեր ստացած տպաւորութիւնները, թէ՛ արտաքին աշխարհից եւ թէ՛ մեր մարմնի միջոցով՝ (հոգու համար մարմինը եւս արտաքին աշխարհ է), մեծ մասամբ խարուսիկ են: Երբ Գալիլէն պնդում էր, որ երկիրն է պտուտղը եւ արեւը չէ որ մայր է մտնում, նրա դէմ դատ բացին, որովհետեւ իր այդ զիւտով Գալիլէն ոչ միայն դէմ պնաց իր ժամանակի մարդկանց հաւատի ցուցմունքներին, այլեւ դէմ պնաց տիրող այն սկզբունքին, որ իբր թէ մեր տպաւորութիւնները անսխալ են: Այն ժամանակ կարելութիւն չէին տալիս այն մտքին, որ մեր զգայարանները չեն, որ մեզ դէպի ճշմարտութեան ճանապարհը կը տանեն եթէ մեր դատողութեան ոյժն է որ կը սրբադէ մեր խարուսիկ զգացումների պատրանքները:

Մեր ամենօրեայ փորձը մեզ ցոյց է տալիս, որ մենք մեր հասարակ զգացողութիւնների (perception) մէջ յաճախ զգայախարութեան զոհ ենք: Օրինակները բազմաթիւ են: Ամէն մարդ գիտէ, որ եթէ փայտի մի մասը ջրի մէջ ընկղմենք, փայտը կարծես թէ մեր աչքերի առջեւ կը կոտրէ: Աստղագիտութիւնը կը հաստատէ, որ երկնային մարմինները մեղանից բնաւ այն հեռաւորութեան վրայ չեն գտնուում, ինչպէս որ մեզ թւում է: Մենք շատ անգամ զգում ենք, որ իբր թէ մեր մարմնի վրայ մրջիւններ են շարժուում, մինչ միւս կողմից մեր մորթը ունենալով դանադան անիրական զգացողութիւններ, կարող է չզգալ իրական զրդիոներ՝ (օրինակ՝ զնդասեղի ծակոցներ): Այդ ե-

րեւոյթը որոշ չափով բացասական զգայախարութիւն կարելի է անուանել, -- երբ անհատը իրական զրդիոր չի զգում:

Դրական եւ բացասական զգայախարութիւնները մարմնի նոյն մասի մէջ միանալով, կարող են հետաքրքրական պատկեր տալ: Օրինակ՝ մորթը, չզգալով զնդասեղի իրական զրդիոր, կարող է տառապել նոյն մասում անիրական ցաւերի զգացումից, որով կը ստացուի այն հիւանդապին նշանը, որ կոչւում է Anesthésie douloureuse, -- ցաւալին անզգայութիւն: Կան դէպքեր, երբ մարմնի ջղերից մէկը, մեծ մասամբ՝ ձեռքինը, վիրաւորւած լինելով կը կորցնէ զգացողութեան իր ընդունակութիւնները, բայց եթէ փորձենք առողջ ձեռքի համապատասխան մասերը զրդուել, հիւանդի անզգայ ձեռքն է, որ կը սկսի ցաւիլ ու տառապիլ բազմազան, տարօրինակ, շատ անգամ անտանելի զգայութիւններով: Եւ հիւանդը, այդ զգայութիւններից ազատւելու համար, միջոցներ կը խորհի իր առողջ ձեռքը արտաքին զրդիւններից պաշտպանելու համար: Մենք գիտենք եւ այն երեւոյթը, երբ վիրաբուժական գործողութիւնից յետոյ, հիւանդը դանդաղուում է՝ իր այլեւս զոյութիւն չունեցող ոտքի կամ ձեռքի մատի ցաւերից:

Տարրական զգայախարութիւնները ունեն իրենց Ֆիզիքական եւ բնախօսական պատճառները: Նրանք հասկանալի են իւրաքանչիւր անհատի, որ յաճախ կարողանում է քննադատական ուժով բարոնել իր զգայախարութիւնները

սխալները: Այս տարրական խաբուսիկ տպաւորութիւնների գիտական բացատրութեան վրայ, մենք այստեղ կանգ չենք առնի:

Բոլոր այս երեւոյթներին մօտ են պատրանքները, երբ մենք իրական դրդիւր զգում ենք կերպարանափոխուած ձեւով: — Անհատը մի լուսանկարի վրայ նայելով սկսում է զգալ յանկարծ, որ լուսանկարի մէջ ներկայացւած անձնաւորութիւնը շարժւում է ... Շարժւում են աչքերը, շրթունքները եւ լուսանկարը փոխում է իր արտայայտութիւնը: Գրգիւր իրական է, բայց մեր զգացողութիւններն են որ ընդունում են երեւակայական բնոյթ: Յայտնի է որ անհատը, կարգալու ժամանակ, առանց նրկատելու, սրբազրում է պակաս տառերն ու տառախաղները: — Կարգալ չի նշանակում տեսնել, կարգալը միմիայն տեսողութիւն չէ, այլ երեւակայութեան մի բարդ աշխատանք: Նոյնը կատարւում է, երբ մենք հեռախօսի միջոցով, մեր լսած բառերի մէջ բոլոր չարտասանւած տառերը եւ վատ արտասանւած հնչիւնները երեւակայութեամբ սրբազրում ենք:

Պատրանքները, ինչպէս եւ տարրական զգայախաբուսութիւնները յաճախ սրբազրելի են:

Մենք քննեցինք տարրական զգայախաբուսութիւնները եւ պատրանքները: Բայց զգայախաբուսութիւնը ունի աւելի բարդ տեսակներ:

Շատ զէպքեր կան, երբ անհատը անկարող է սրբազրել իր խաբուսիկ տպաւորութիւնները: Այդ նշանակում է, որ անհատը ունի անյաղթելի հաւատ իր խաբուսիկ զգացողութիւնների ճշմարտութեան վերաբերեալ: Esquirol-ը իր կլասիկ նկարագրութեան մէջ չեղտում է խորին հաւատի նշանակութիւնը հալլիւսիմասիօսների ճաշման մէջ: Պարզ զգայախաբուսութիւնը մի տպաւորութիւն է, որը, ինչպէս տեսանք, իրական պատճառ չունի, այսինքն գոյութիւն չունի հրէշը, որ անհատը տեսնում է, այն ուրախ կամ աղէտալի ծայները, որ նա լսում է, այն օձը, որը նա զգում է իր աղիքների մէջ (perception

sans objet): Այս զգայախաբուսութիւնները հալլիւսիմասիօսի դառնալու համար պէտք ունին որոշ հոգեկան ախտաբանական պայմանների, որոնց մէջ մտնում է, ինչպէս յիշեցինք, խորին համոզումը որ անհատը տեսնում է իրական աշխարհի առարկաները, լսում է իրական հնչիւնները, բայց չի ընդունում որ այդ ամէնը իր երեւակայութեան ստեղծագործութեան արդիւնքն է. նա մինչեւ անգամ յաճախ երազային վիճակ է ապրում: Ահա այս հոգեբանական դրութիւնն է պատճառը, որ անհատը անկարող է սրբազրել իր խաբուսիկ զգացողութիւնները եւ զգայախաբուսութիւնը աստիճանաբար զարգանում է դէպի հալլիւսիմասիօս:

Այստեղ կարող ենք յիշել պսիկոհալլիւսիմասիօսները, որոնց հանճարեղ նկարագրութիւնը գտնում ենք Baillarger-ի եւ Kandinski-ի աշխատութիւնների մէջ:

Ինչպէս պարզ հալլիւսիմասիօսների մէջ, այնպէս եւ այստեղ անհատը անիրական աշխարհը իրականացնում է եւ համոզւած է, որ իր տպաւորութիւնները իրական երեւոյթների հետ են կապւած, բայց այդ տպաւորութիւնները նա ստանում է ոչ թէ զրաից կամ իր մարմնի զանազան մասերից, որոնք ինչպէս յիշեցինք հոգեկան կեանքի համար նոյնպէս արտաքին աշխարհին են պատկանում, այլ իր գլխի մէջ: — Այսպէս՝ օրինակ՝ հիւանդը համոզւած է, որ իր գլխի մէջ հեռախօս կայ զետեղուած, որին օգտագործում են իր բաղմաթիւ թշնամիները՝ ներշնչելով իրեն օտար ու չար մտքեր, իրան նախատելով եւ կամ պարզապէս զողանում են իր սեփական գաղափարները: Բաւական է որ հիւանդի գլխի մէջ մէկ միտք ծագի, նրան թւում է իսկոյն, որ այդ միտքը զրոտւած էրկնում է: Այսպիսի պարադաներին հիւանդը ընդունակութիւն է ունենում զրաից եւս զգայախաբուսութիւն ունենալու:

Շատ անգամ հիւանդն ինքն ասում է. —

« Իմ զգացողութիւնը փաստ է, բայց

երեւոյթն է անիրական » : Դա նշանակում է, որ հիւանդը հաւատալով հանդերձ իր զգացողութեան իրականութեան, միւսնոյն ժամանակ չի հաւատում այդ երեւոյթի իրականութեան : Այսպիսի պարադոքսին կը նշանակէ որ քննադատութեան ուժը դեռ եւս կորած չէ, որովհետեւ անհատը չի հաւատում երեւոյթի կարելիութեան : Այդպիսի դիտակցական հալլիւսինսիոնները կոչւում են հալլիւսինսիոզինչպէս երբեմն մեր երազների մէջ, հաւատալով հանդերձ մեր զգացողութիւններին, զգում ենք որ երազի մէջ ենք :

Երազի վիճակը կարեւոր է ոչ միայն զգայախարութիւնը հալլիւսինսիոնի վերածելու համար, այլ շատ տեսակ զգայախարութիւնների իրական իմաստը հասկնալու համար : Այս տեսակէտով մեզ համար հասկանալի պիտի լինի հանճարեղ Griesinger-ի տեսակէտը, որ երազը մի կարճատեւ հոգեկան հիւանդութիւն է, մինչդեռ հոգեկան հիւանդութիւնը մի յարատեւ երազ է :

Աւելի բարդ դէպքեր կան : Զգայախարութեան՝ ինչպէս եւ հալլիւսինսիոնի՝ հիմքում, ինչպէս տեսանք, անիրական առարկաների կամ ձայների զգացողութիւն կայ, բայց ինքը զգացողութիւնը իրական է, այսինքն հիւանդը իրականապէս տեսնում է դոյութիւն չունեցող առարկան : Բայց այդ զգայախարութիւնը անպատճառ ուժեղ չպէտք է լինի արտայայտուած : զգայախարութիւնը իր զգացողութիւն կարող է եւ շատ թոյլ արտայայտուել : տեսիլքը, շատ անորոշ կարող է լինել, դիտաւոր դերը տեսիլքի ուժի մէջ չէ, այլ հոգեկան այն վիճակի մէջ է, որի մասին քիչ առաջ խօսեցինք : Պատահում են դէպքեր, երբ տեսողութիւնը կամ լսողութիւնը նոյն իսկ դոյութիւն չունեն, մտապատկերը միանգամայն վերացական, երեւակայական է . — հիւանդը կարծում է որ տեսնում է, կարծում է որ լսում է . . . — խարուսիկ պատկերը, լարուած մտքի, լարուած երեւակայութեան եւ երազային վիճակի ծնունդ է : Այս վե-

րացական տեսիլները մեծ մասամբ ցնորական մտքերի հետ են առաջանում եւ շատ անգամ ստանում են քրոնիկ, տեւական զարգացում :

Գիտութիւնը աշխատում է մի որոշ հասկացողութիւն ունենալ այն միջոցների մասին, որոնցով կարելի կը լինի զանազանել զուտ վերացական տեսիլները խարուսիկ զգացողութիւններից, որտեղ անհատը իրականապէս է ստանում թէ՛ տեսողութեան, թէ՛ լսողութեան բոլոր տպաւորութիւնները :

Վերջապէս կայ նաեւ մէկ ուրիշ դէպք, երբ հիւանդը ինքն իրեն խօսում է, բայց իրեն թւում է որ ուրիշի խօսքերն է կրկնում : Այդ խօսքերի իմաստը նա ըմբռնում է միայն այն ժամանակ, երբ բարձրաձայն արտասանելով, իր սեփական ականջով լսում է նրանց : Այդպիսով նա իր սասածը հասկանաւ է միմիայն լսելուց յետոյ, իր ուրիշի խօսքեր եւ համոզւած է որ ուրիշի հիպնոզի տակ է գտնւում : Սա կոչւում է hallucination verbale.

Զգայախարութիւնները կարող են արտայայտուել լսողութեան, տեսողութեան, չօչափելիքի եւ ներքին օրգանների զգացողութիւնների մէջ : Հիւանդը կարող է տեսնել կամ լսել իր տեսողութեան եւ լսողութեան սահմանից դուրս : օրինակ՝ կարող է տեսնել առարկաներ, որոնք իր թէ իր թիկունքի ետեւն են գտնւում . . . :

Մէկ ուրիշ անգամ մեզի կը մնայ կանդ առնել զգացողութիւնների ծագման, բնախօսական եւ հոգեբանական պայմանների եւ նոցա դիտական ուսումնասիրութիւնների մեթոդների վերայ : Բացի բժշկական հարցերից այդ ուսումնասիրութիւններն ունեն եւ այլ նպատակ, որի համար փիլիսոփայութիւնը, առանց չօչափելի յաջողութեան, դարեր շարունակ ճիշդ է թափել : Ի՞նչ է այդ նպատակը : Յազեցնել մարդկային հոգու փնտրումների ծարաւը եւ սահման գտնելով խարուսիկ տպաւորութիւնների եւ երազների համար, հասկանալ թէ ի՞նչ է իրական աշխարհը :

ՊՐՈՖ. Կ. ԱՂԱՋԱՆԵԱՆ